սից բաժանեալ դնէ, ասում է, զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահել գանձուն երկնաւորի ի գերչաց ապականչաց.» միևնոյն ժամանակ յիշում է, որ Ս. Լուսաւորչի «քրիստոսադրոշմ և պատուական գլուխը» խոր տեղ չամփոփեց, «այլ արտաքոյ ի գզրոցի եդեալ» պահպանում էր գանձերի մէջ ուխտաւորների համար։ Զուարթնոց եկեղեցին մի հրաշալիք է համարուել հին ժամանակ իւր շինուածքով. մի յիշատակարանում ասուումէ, որ Ներսէս Գ. Բիւզանդիոյ Կոստանդ կայսեր ծախքով շինեց «զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքուդաշտի ի սուրբն Գրիգոր»։ Ասողիկ «զանազան յօրինուածով» «հրաշապայծառ եկեղեցի» է անուանում Առապարի ս. Գրիգորը. իսկ Մխիթար Այրիվանեցին 641—690 թուականների մէջ է դնում նորա շինութիւնն և, թերևս Սամուէլ Անեցուց առնելով, ասումէ. Շինողն Ներսէս շինէ զԱռապարի ս. Գրիգորն զզարմացուցիչն տիեզերաց, որ քակեցաւ ի Տաճկաց։ Նայելով այդ շինութեան արդի բեկորներին, արդարև. չէ կարելի չզարմանալ շէնքի ընդարձակութեան, շքեղութեան և ամրութեան վերայ։ Զորս սեան խոյակները տակաւին կան և մնում են իբրև ապացոյց անցեալ վկայութիւնների։ Նոքա այսօր գտնուում են Մայր Աթոռի Գէորգեան ճեմարանի գաւթում։ Եւրոպական հնա-